ԼԵՎՈՆ

ՏԻԳՐԱՆՅԱՆ

61 գ
Ս-572

20 JUL 2010

Հովսեփ Վարդանի Հովասափյան
բժ. գիտ. դոկտոր

Վարդան Հովսեփի Հովասափյան
բժ. գիտ. թեկնածու, դոցենտ

ԼԵՎՈՆ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Երևան - 2000

© ՀՀ առողջապահության նախարարություն, 2000

«Լեւոն Տիգրանյան» ոչ մեծածավալ գրքով սկսում ենք «Վաստակաշատ բժիշկներ» մատենաշարը՝ որպես հարգանքի ու երախտագիտության տուրք բոլոր այն բժիշկներին, ովքեր իրենց անդուլ աշխատանքով կերտեցին «կանխարգելիչ բժշկության» տաճարը, ովքեր մոմերի պես մեկիկ-մեկիկ, ինչպես հին լատինական ասացվածքն է ասում. «իրենք այրվելով՝ լուսավորեցին այլոց», ովքեր հավատարիմ մնացին «Զի բժշկին ջանքն ու իմաստությունը զի յայն երեւնայ, որ պահէ զառողջ մարմինն ի սահմանն յուր» (Գրիգորիս, 12-րդ դար) պատգամին:

Հետամուտ եղեք մեր մատենաշարին:

ՀՀ Գլխավոր պետական
սանիտարական բժիշկ Վ. Դավիդյանց

ԼԵՎՈՆ ՏԻԳՐԱՆՅԱՆ

"Վաստակաշատ բժիշկներ" մատենաշարի այս գրքում շարադրված է հայ ժողովրդի արժանավոր զավակ, անցյալ դարավերջի հանրաճանաչ բժիշկ՝ Լեւոն Տիգրանյանի կյանքն ու գործունեությունը:

Դորպատի համալսարանն ավարտելուց հետո, Տիգրանյանը ծառայել է ռուսական բանակում: Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Էրզրումի նահանգում պայքարի միջոցառումներ է իրականացրել բծավոր տիֆի ամայացնող համաճարակի դեմ:

1879 թվականից նա տեղափոխվել է Երեւան եւ ամբողջապես նվիրվել իր ժողովրդի առողջապահության գործին, որտեղ եւ ձեւավորվել են հայրենասեր բժիշկի գործունեության հետագա ուղղությունները: Նա այն բացառիկ հայ բժիշկներից է, որ վարակիչ հիվանդությունների պայքարի գործում առաջնայինը համարել է նախազգուշական միջոցառումները: Նա կանխարգելումն համարել է բժշկության հիմնական գործոնը եւ նրա ապագան: Բացի բուժող բժիշկ լինելուց, նա զբաղվել է եւ բնակչության կենցաղային մակարդակի բարձրացման, դպրոցական առողջապահության եւ ընդհանուր սանիտարական հարցերով:

Տիգրանյանը եղել է նաեւ Երեւանի քաղաքագլուխ, հասարակական խոշոր գործիչ, հրատարակիչ եւ արժեքավոր գրական ժառանգություն է թողել սերունդներին:

ԼԵՎՈՆ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Հայ անվանի բժիշկ Լեւոն Հակոբջանի Տիգրանյանը ծնվել է 1842թ. նոյեմբերի 19-ին Երեւանում, զինվորականի ընտանիքում:

Հայրը 1827-ին ռուս պարսկական պատերազմի ժամանակ եղել է Պասկեւիչի բանակում եւ մասնակցել հայրենի հողերի ազատագրմանը: 1829-ին նա կամավոր մասնակցել է նաեւ ռուս-թուրքական կռիվներին: Պատերազմի ավարտից հետո էլ հայրը շարունակել է ծառայությունը Նախիջեւանում՝ ընտանիքը մշտապես թողնելով Երեւանում:

Տիգրանյանի առաջին ուսուցիչը մայրն է եղել: Նա տղային գրել-կարդալ սովորեցնելուց բացի նրա հոգում վառել է հայրենասիրության անշեջ կրակը:

Փոքրիկ Լեւոնը նախնական կրթությունը ստանում է Երեւանի միջնակարգ դպրոցներից մեկում, սակայն հոր մահից /1852/ հետո, մայրը ստիպված է լինում նրան տեղափոխել Թբիլիսի, ամուսնու փոքր եղբոր՝ բժիշկ Արտեմ Հովհաննիսյանի մոտ: Վերջինս ուրախությամբ ստանձնում է պատանի Լեւոնի կրթության եւ դաստիարակության հետագա գործը:

1858-ին Թբիլիսի է գալիս Լ.Տիգրանյանի մորեղբայրը, հայտնի մեծահարուստ, բարերար Մկրտիչ Սանասարյանը (նա խոշոր գումարներ է տրամադրում դպրոցներին եւ հայ երեխաների կրթության գործին): Այդ նույն օրերին Թբիլիսի է գալիս Լ.Տիգրանյանի մայրը և այստեղ հանդիպում է եղբորը: Այս հանդիպումն էլ բախտորոշ նշանակություն է ունենում պատանի Լեւոնի ապագայի համար:

Կատարյալ կրթություն տալու նպատակով Սանասարյանը Պետերբուրգ է տանում նաեւ քրոջ որդուն, ուր պատանի Լեւոնը սկզբում սովորում է հայտնի գիտական գործիչ Կարապետ Եզյանի /Էզով/ մասնավոր պանսիոնում:

Մի քանի տարվա համառ պարապմունքներից հետո, հանձնելով պահանջվող քննությունները, Տիգրանյանը ընդունվում է Դորպատի համալսարանի բնական գիտությունների ֆակուլտետը:

1866-ին Լ. Տիգրանյանը, մորը տեսնելու նպատակով, վերադառնում է Երեւան եւ կարճ ժամանակ անց նորից մեկնում Պետերբուրգ: Մկրտիչ Սանասարյանը պանաջում է նրան մնալ իր մոտ իրավաբանական կրթություն ստանալու համար: Սակայն որոշակի բանակցություններից հետո, Տիգրանյանը համաձայնում է Պետերբուրգում մնալ՝ միայն բժիշկ դառնալու պայմանով:

Դորպատ ուղարկ փաստաթղթերի ուշ ստացման պատճառով, միայն հաջորդ տարին է նրան հաջողվում Դորպատից հետո ընդունվել

Պետերբուրգի ռազմաբժշկական ակադեմիա: Սակայն շուտով նրա եւ քեռու միջեւ հակասություններ են սկսվում, որին իր միջամտություններով նպաստում է նաեւ Կ. Եզյանը: Տիգրանյանը ստիպված է լինում Պետերբուրգից հեռանալ եւ կրթությունը շարունակել Դորպատի համալսարանում: Սակայն այստեղ էլ նա մեկ տարի կորցնում է լրացուցիչ քննությունների հանձնման եւ գերմաներեն լեզուն սովորելու համար:

1875-ին Տիգրանյանը 33 տարեկանում ավարտում է Դորպատի համալսարանի բժշկական ֆակուլտետը:

Այդ օրերին Թբիլիսիում հիվանդանում է նրա մեծահարուստ ազգականուհին, որի համար էլ այնտեղ են հրավիրում երիտասարդ բժիշկ Տիգրանյանին: Հանգամանքների բերումով անհրաժեշտություն է առաջանում հիվանդին, բուժման նպատակով, ուղեկցել արտասահմանյան երկրներ: Այս առիթով էլ երիտասարդ բժիշկը մի քանի ամիս եւս շփվում է Ֆրանսիայի եւ Գերմանիայի տարբեր քաղաքներում գործող հեղինակավոր բժիշկների հետ: Վերադառնալով արտասահմանից Տիգրանյանը աշխատանքի է անցնում Պետերբուրգի Նադեժդինյան ծննդատանը: Սակայն շուտով փոխվում են հանգամանքները եւ նա դարձյալ հեռանում է Պետերբուրգից:

1877-ին բռնկվում է ռուս-թուրքական պատերազմը եւ նորավարտ հայրենասեր բժիշկը կամավոր մեկնում է գործող բանակ: Որպես զինվորական բժիշկ՝ նրան շուտով փոխադրում են արեւմտյան Հայաստան եւ նշանակում նոր ազատագրված Էրզրումի եւ ողջ նահանգի ընդհանուր բժիշկ: Այստեղ նա առաջին անգամ բախվում է բծավոր տիֆի համաճարակի հետ, որը ավելի ծանր ընթացք ուներ գյուղերում ապրող բնակչության շրջանում, ուր ոջլոտությունը կրում է համատարած բնույթ, եւ բանակը տուժում է դրանից: Դրությունը առանձնապես ծանր է լինում Հասան-կալայում, ուր բծավոր տիֆից ռուսական բանակը մինչ այդ կորցրել էր 30 հազար զինվոր: Այս ճակատում երիտասարդ ու բանիմաց բժիշկն այդ նենգ հիվանդության դեմ հաղթանակի հասնելու գործում մեծ համառություն է ցուցաբերում: Այստեղ էլ, առաջին անգամ, բժիշկի վեհ կոչմանն արժանի, դրսեւորվում են նրա գիտելիքները եւ ունակությունները: Ոջլոտության դեմ տարվող պայքարի գործում Լ.Տիգրանյանը օգտագործում է բոլոր հնարավոր միջոցները՝ այդ թվում եւ գյուղական վայրերում եղած թոնիրները: Այստեղ՝ տաք չոր օդի պայմաններում, հագուստեղենն որոշակի ժամանակ մնում է կախված՝ թոնրի հատակին եղած կրակի վրա եւ մի քանի անգամ թափահարվում է: Զինվորների հագուստեղենի նման մշակումները պարբերաբար կրկնվում են, որոնք մեծ նշանակություն են ունենում բծավոր տիֆի տարածումը կանխելու հարցում:

1879-ին, պատերազմի ավարտից հետո, Տիգրանյանը վերադառնում է Երեւան եւ նշանակվում քաղաքային բժիշկ, ուր դրսեւորվում են նրա հետագա գործունեության հիմնական ուղղությունները: Հայրենի քաղաքում նա ծավալում է լայն բժշկական եվ հասարակական գործունեություն, մասնավորապես մեծ ուշադրություն դարձնելով, իր բառերով ասած, դիպչողական /վարակիչ/ հիվանդությունների դեմ տարվող պայքարի գործին: Այդ նույն թվականին էլ հրատարակվում է նրա լատիներենից եւ ռուսերենից հայերեն թարգմանված անատոմիայի տերմինաբանական բառարանը: Նրա կողմից առաջադրված շատ տերմիններ մտնում են հայ բժշշկագիտության մեջ եւ մինչեւ օրս էլ նույնությամբ գործադրվում են: Նա հետագայում կազմում է նաեւ բժշկական բառերի հայերեն բառարանը, որը ժամանակին համարվում է լուրջ գիտական ուսումնասիրությունների արդյունք:

Պետք է ընդունել, որ Տիգրանյանի աշխատանքները, մասնավորապես տերմինաբանության ստեղծման հարցերում, շատ ծանրակշիռ ներդրում են հայ բժիշկագիտության բնագավառում:

Առաջին իսկ տարվանից Տիգրանյանն իր բնակարանում ստեղծում է հարուստ գրադարան, որով սպասարկում է բնակչությանը եւ մասնավորապես դպրոցականներին: Նշանավոր գրող Ռ.Պատկանյանը հյուրընկալվելով Տիգրանյանի տանը, ծանոթանում է նրա գրադարանին, զրուցում ընթերցողների հետ եւ ասում է, որ այդ գրադարանի օգուտը, հավասար է մի լավ ուսումնարանի տված օգուտին: Հայրենասեր բժիշկը վերջում գրադարանը նվիրում է հայկական դպրոցներից մեկին:

1881-ին նա մայրենի լեզվով հրատարակում է 123 էջանոց "Մարմնակազմություն" դասագիրքը, որի վերջին 27 էջերը տրամադրվում են անատոմիական բառարանին: Այդ ձեռնարկը տարիներ շարունակ հայկական դպրոցներում ծառայում է որպես դասագիրք: Տիգրանյանը դպրոցներում անատոմիայի դասերի հետ միասին, պարապում է նաեւ այլ առարկաներ:

Լեւոն Տիգրանյանի գլխավոր ներդրումներից մեկը համարվում է "Առողջապահական թերթ"-ի հիմնադրումը, որն իր ժամանակին խոշոր դեր է ունենում ժողովրդի մտավոր ու հոգեւոր կյանքում եւ [illegible] ուրույն տեղ [illegible] ունի հայ բժշկության պատմության մեջ:

1881-ի հունիսին, էմին Տեր-Գրիգորյանի տպարանում հրատարակվում է այդ թերթի առաջին համարը: Վերջինս 30 էջանոց էր եւ հրատարակվելու էր ամիսը մեկ անգամ՝ տարեկան 3 ռուբլի արժեքով: Երեւանում տպագրվող "Առողջապահական թերթ"-ն առաջին ծանրակշիռ բժշկական հանդեսն էր, որի հրատարակումն անանախադեպ էր հայ իրականության մեջ :

Այս մասին թերթի խմբագիր Տիգրանյանը գրում է. «Մենք՝ հայ բժիշկներս ենք մեղավոր, քանի որ մի հայերեն գիրք չունենք գրված, առողջապահական հարցերի վերաբերյալ»:

Թերթի շապիկի վրա աչքի են ընկնում հետեւյալ ընդգծված տողերը. «Բժշկությունը գործադրվում է նաեւ վայրենի ազգերի մեջ, իսկ առողջապահորեն ապրում են միայն լուսավորյալ ազգերը»:

1881-ի աշնանը, Թբիլիսիում, հնեաբանների համագումարին մասնակցող գերմանացի պրոֆեսոր Ռուդոլֆ Վիրխովը ծանոթանալով թերթին, հայտնում է այն միտքը, որ եթե այս հանդեսը արժանացել է ժողովրդի ընդունելությանը, դա ապացույց է այն բանի, որ հայերն ունեն առողջապահորեն ապրելու համար զարգացման համապատասխան մակարդակ:

Դարավերջին "Առողջապահական թերթ"-ը դառնում է հայ առաջադեմ մտավորականների ու բժիշկների գաղափարական կենտրոնը եւ իր շուրջն է համախմբում բժիշկներ Ավետիք Բաբայանին, Արտյոմ Հովհաննիսյանին, Գրիգոր Տեր-Գրիգորյանին, Բագրատ Նավասարդյանին, Գրիգոր Քոչարյանին, Մարտիրոս Քոչարյանին, Արմենակ Շահազիզյանին եւ ուրիշների:

1881թ-ին փետրվարի 28-ին Գայանյան ուսումնարանի դահլիճում կարդացած "Երեւանը Առողջապահական կետից" դասախոսության մեջ / "Առողջ. թերթ" հ.2/ Տիգրանյանը անդրադառնում է Երեւանի բնակլիմայական պայմաններին, սանիտարական վիճակին, ջրին, ճահիճներին եւ օդափոխությանը: Նա գտնում է, որ ինչպես ասիական մյուս քաղաքները, այնպես էլ Երեւանը ունեն նույն առողջապահական պայմանները: Այստեղ նպաստավոր պայմաններ են առաջացել տիֆերի, հարենքի /լուծերի/, դիֆթերիայի եւ այլ դիպչողական հիվանդությունների տարածման համար:

Նույն դասախոսության ժամանակ Տիգրանյանը խոսում է նաեւ բոլորովին նոր սկիզբ դրված մի գիտության մասին, որի ծնունդը ուղղակի ձեւով կապված է մանրադիտակի պատմության եւ նրա կատարելագործման հետ: Այս առիթով նա նշում է, որ գոյություն ունեն նաեւ սովորական աչքի համար ոչ տեսանելի բազմաթիվ կենդանի էակներ, որոնց հնարավոր է տեսնել միայն մանրադիտակով; Ձեռքի տակ չունենալով ոչ մի լիարժեք եւ բավարար տվյալ, Տիգրանյանը ճիշտ է կողմնորոշվում՝ նշելով, որ Երեւանում եղած ճահիճները, բակերում, շուկայում կանգնած ու հոտած ջրերը, գարշահոտություն տարածող աղբակույտերն ու զուգարաններն համարվում են այդ փոքրիկ կենդանիների՝ անտեսանելի էակների, ստեղծման ու տարածման հիմնական վայրերը:

Նա միաժամանակ հիշեցնում է, որ Երեւանում հանդիպող նեխած ջրերով ճահիճները ավելի վտանգավոր են, քան դաշտերում

հանդիպողները, որոնց մոտակայքում մարդիկ չեն բնակվում: Տիգրանյանը իր ունկնդիրներին բացատրում է, որ բազմաթիվ փորձերից հետո բժիշկները համոզվել են, որ դիպչողական հիվանդությունների (տիֆ, հարենք, դիֆթերիա) սկզբնական պատճառը իրոք հանդիսանում են այդ անտեսանելի էակները, որոնք կոչվում են նաեւ բակտերիաներ, որոնք լինում են տարբեր տեսակների, մարմնի ձեւերով լինում են այլատեսքի ու չափերի:

Տիգրանյանի դիտարկումները ցույց են տալիս, որ հայրենի քաղաքում հիվանդությունների տարածմանը շատ է նպաստում Գետառի ապականված ջուրը, որը բնակիչները օգտագործում են խմելու համար: Մինչեւ Երեւանին հասնելը, գետի ջրի մեջ գոմեշներ են լողացնում, լվացք անում, կաշի մաքրում, աղբ թափում եւ ամեն կերպ ապականում ջուրը: «Աչքովս եմ տեսել,- գրում է նա,- գետառի մեջ ընկած շան, կատվի եւ այլ կենդանիների հոտած ու քայքայված դիակները»: Գետառը, ինչպես նաեւ Զանգվից սկիզբ առնող Աբուհայաթ եւ Մամուռ կոչվող առուները, հոսելով քաղաքի փողոցներով ու բակերով, էլ ավելի են ապականվում, քանի որ դրանց մեջ են լցվում բոլոր տեսակի կեղտաջրերը: Հայրենասեր բժիշկը՝ այդ տարիներին շատ ջանքեր է գործադրում, մինչեւ որ կարողանում է Երեւանից 20 վերստ հեռավորության վրա գտնվող Բաշ գյուղից, 40 աղբյուրների ջրի մի մասը գունգերով Երեւան հասցնել: Նա դրվանտանքի խոսքեր է գրում Ղեւոնդ Ղազարյանի մասին, որը 10 հազար ռուբլի էր հատկացնում ջրատարի կառուցման համար: (Ի դեպ պետք է նշել, որ Ղազարյանը այն եզակի ազգասեր բարեգործներից է, որը իր գումարներով կառուցել է նաեւ Գայանյան Օրիորդաց ուսումնարանի շենքը: Ջրատարի կառուցման նպատակով Ղազարյանի կատարած նվիրատվությունը շատ բարձր է գնահատվում Տիգրանյանի կողմից եւ նրա կարծիքով, մինչ այդ, դրան հավասար չի եղել Երեւանում):

Անդրադառնալով իր հայրենիքի քայքայված վիճակին՝ Տիգրանյանը ցավով է նշում, որ բանականությամբ օժտված մարդը մի դեպքում կարող է բնակավայրերը շենացնել եւ նպաստավոր պայմաններ ստեղծել մարդկային հասարակության ապրելու համար, մինչդեռ մի այլ դեպքում՝ այդ նույն մարդը կարող է հակառակն անել եւ դրախտ երկիրը դժոխքի վերածել: Այս առիթով էլ նա հիշեցնում է Մովսես Խորենացու կողմից 5-րդ դարում Արարատյան դաշտավայրի մասին գրված հիասքանչ խոսքերը. «Արշակ թագավորն թողույր զգաւառն Այրարատու զհոյակապն, զհռչակավորն, զականավորն, զամենաբուղխն, զարմանալին ի շահս եւ ի զարմանս մարդկային պիտոյիցս»: «Սակայն ներկայումս,- շարունակում է Տիգրանյանը,- Արարատյան դաշտավայրում եւ նրա գավառներում տեսնում ենք

մերկացած սարեր, ավերված բնակավայրեր, վնասված օդ ու ջուր, եւ տարածված հիվանդություններ: Թշնամի ցեղերը պարբերաբար այրել են մեր անտառները, քանդել ջրանցքները, աղքատացրել բնակիչներին, ապականել ու վատառողջ դարձրել այդ բարեբեր երկիրը»: Այստեղ նա հայտնում է այն միտքը, որ հիվանդությունների ծագման ու տարածման գործում մեծ նշանակություն ունեն՝ մարդկանց կեցության միջավայրի պայմանները: Հետեւաբար ներկայիս ապրողներից պահանջվում է մտածել, հնարավորություններ ստեղծել եւ վերականգնել Արարատյան դաշտավայրի կործանված փառքը, կորցրած հմայքը եւ այն նորից դառնել բարեբեր երկիր: Եթե բնակիչները խելացի մոտենան եւ չխուսափեն որոշակի ծախսերից, Երեւանի բնակլիմայական եւ առողջական պայմանները նույնպես հնարավոր է հանրօգուտ փոխել՝ այն դարձնելով նպաստավոր ու անվտանգ ապրելատեղ, ինչպես որ անցյալում արեցին հոլանդացիներն իրենց երկրում:

Իր սկզբունքներով եւ առաջադիմական հայացքներով Տիգրանյանը ելնում է ռուսական բժշկության ակունքներից: Նա սովորեցնում է, որ ավելի հեշտ է ու քիչ ծախսեր է պահանջում հիվանդություններից պաշտպանվելը, քան դրանց բուժումը եւ համաճարակների վերացումը: Տիգրանյանը հիվանդությունների կանխարգելումը համարում է բժշկության հիմնական գործոնը եւ նրա ապագան, որով կարելի է հրաշքներ գործել: Նա դատապարտում է այն բժիշկներին, ովքեր, մոռանալով գլխավորը, բավարարվում են միայն դեղատոմսեր գրելով եւ սպասում են հիվանդների այցին:

Շուտով "Առողջապահական թերթի" առաջին համարում տպագրվում է նաեւ մի որոշում, ուր ասվում է. «Քաղաքային վարչությունը ընդունելով բժիշկ Լ. Տիգրանյանի առաջարկությունը Երեւանում կազմակերպել է "Առողջապահական մշտական հանձնաժողով", որը գործելու է 1881-ի հունվարի 12-ից, պարտադիր ծրագրով»: Փաստորեն Տիգրանյանը համարվում է հայ իրականության մեջ առողջապահական առաջին հանձնաժողովի առաջին կազմակերպիչը եւ հիմնադիրը: Հանձնաժողովի նախագահն է լինում Լ.Տիգրանյանը, նրա կազմում ընդգրկվում են նաեւ քաղաքային դյումայի 4 անդամներ: Հանձնաժողովն ունենում է նաեւ 3 առողջապահ /սանիտար/, 2 բանվոր եւ 2 սայլ՝ իրենց սայլապաններով: Վերջիններս զբաղվում են աղբահանման, ճահիճների չորացման եւ գոյացած փոսերի լցման գործով: Մեծ են լինում նաեւ Առողջապահական հանձնաժողովի անելիքները, քանի որ Երեւանը գտնվում է սարսափելի հակասանիտարական պայմաններում:

"Մշակ" թերթի հիմնադիր Գրիգոր Արծրունին 1890-ին ճանապարհորդելով Երեւան, Դավալու, Սուրմալու, Էջմիածին, Աշտարակ

բնակավայրով, գրում է. «Քանաքեռից Երեւանին նայելիս հիացանք նրա տեսքով, սակայն երբ իջանք քաղաք՝ այդ տպավորությունը շուտով անհետացավ: Ամեն տեղ կեղտ ու աղբակույտեր կար, որոնք կարծես դարերով դիզվել էին այստեղ: Երեւանը ողորմելի վիճակի մեջ էր եւ անկարելի էր երեւակայել, որ այդ քաղաքն ուներ ինքնավարություն»: Տիգրանյանն անդրադառնալով առողջապահական հանձնաժողովի ստեղծման անհրաժեշտությանը գրում է. «Գրեթե բոլոր եվրոպական քաղաքներում գործում են նման հանձնաժողովներ: Այդ քաղաքների իշխանները, իշխանուհիները, հարուստները եւ անվանի մարդիկ իրենց համար մեծ պատիվ են համարում այդ հանձնաժողովի անդամ լինելը: Նրանք խոշոր գումարներ են տրամադրում այդ նպատակին, որով եւ գործում են առողջապահական հանձնաժողովները: Կովկասյան քաղաքներից, առայժմ միայն Երեւանում է ստեղծված նման հանձնաժողով, սակայն նա էլ շատ հոգսեր ունի եւ մեծ դժվարություններով է իր գոյությունը պահպանում: Հայերից շատերը ողջ կյանքում, միայն հարստություն են դիզում եւ խոշոր գումարներ ծախսում զվարճությունների եւ ցոփ կյանքի համար: Անգամ կնոջ եւ երեխայի մահը, չի փոխում որոշ մարդկանց խիղճը եւ վերաբերմունքը հանդեպ ընդհանուր գործին: Նման մարդիկ պատրաստ են նորից ամուսնանալ եւ նոր զավակներ ունենալ: Սակայն երբեք չեն հիշում, որեւիցե գումար տրամադրել առողջապահության ընդհանուր գործին, եւ ազատվել մահ ու սարսափ բերող համաճարակների վտանգից»:

Այս առիթով էլ Տիգրանյանը հիշեցնում է. «Հարստությունը չպետք է համարել միայն ոսկին ու դրամը, որ ունենք մեր սնդուկներում, այլ մարդուն իսկական երջանկություն կարող է բերել միայն առողջությունը, որը վեր է բոլոր տեսակի հարստություններից»: Այստեղ նա հիշեցնում է հանրահայտ դարձվածք. «Ի՞նչ անեմ ոսկե լագանը, որի մեջ արյուն պետք է թքեմ»:

Տիգրանյանը գրում է. «Բնությունը մարդուն տվել է խելք ու բանականություն, որ նա իր մասին մտածի եւ առողջապահորեն ճիշտ ապրի: Իսկ առողջապահությունը դա առանձին գիտություն է, որը պետք է անվերջ սովորել, հարստացնել ու այն ժողովրդի մեջ տարածել: Առողջապահական խնդիրների լուծումներն առանձնապես ցածր են կամ այն բոլորովին բացակայում է մեր շատ գավառներում կամ գյուղական բնակավայրերում: Նույնպես կան գյուղեր, ուր մահացողների քանակը գերազանցում է ծնվածներին եւ գնալով բնակչությունը նվազում է»:

Տիգրանյանը, դիմելով իր համաքաղաքացիներին, գրում է, որ ամեն երեւանցի իրեն պետք է համարի առողջապահական հանձնաժողովի անդամ եւ գործի նրա ցուցումներով: «Դուք հույս մի դրեք

միայն մեր վրա, քանի որ առանց ժողովրդի օգնության, մենք ոչինչ չենք կարող անել»,- ասում է նա:

Առողջապահական հանձնաժողովին են ենթարկվում նաեւ Երեւանի բոլոր կապալառուներն՝ իրենց բանվորներով, որոնք մասնակցում են աղբահանման, ճահիճների չորացման եւ փոսերի լցման աշխատանքներին: Երեւանը բաժանվում է երեք առողջապահական մասի եւ նրանցից յուրաքանչյուրին կցվում է մեկ առողջապահ եւ հանձնաժողովի մեկ անդամ: Օրվա վերջում, կատարված գործերի մասին նրանք զեկուցում են հանձնաժողովի նախագահին:

Ինչպես երեւում է թերթում հրապարակված մի այլ հոդվածից, Տիգրանյանը մեծ դժվարությունների եւ անախորժությունների է հանդիպում հանձնաժողովի աշխատանքները կազմակերպելիս: Այդ մասին նա գրում է. «Քաղաքային վարչությունը եւ պոլիցիան խիստ անտարբեր են եւ չեն օգնում մեզ՝ Երեւանում առողջապահական կարգ ու կանոն հաստատելու համար: Այդ պատճառով էլ ստիպված եմ հրաժարվել հանձնաժողովի նախագահի պարտականություններից, ինչը մինչեւ հիմա կատարում էի սիրով ու մեծ եռանդով»:

Թերթի համարներում մեծ ուշադրություն է դարձվում նաեւ մարդկային հասարականությանը դարեր շարունակ ահ ու սարսափի մեջ են պահող ժանտախտի, խոլերայի եւ տիֆերի համաճարակներին: Այս մասին Տիգրանյանը գրում է. /"Առողջ. թերթ" հ.1, 1881թ./ «Եթե որեւիցե պետության մեջ սկսվում է ժանտախտի կամ խոլերայի համաճարակ, ապա հարեւան պետությունները պետք է ոտքի ելնեն եւ տվյալ երկրին օգնեն բժիշկներով եւ նյութական միջոցներով՝ բռնկված հիվանդությունը տեղում վերացնելու նպատակով: Հարուստ դասակարգը, վարակից պաշտպանելու նպատակով, պետք է մտածի նաեւ աղքատների մասին, որոնց մոտ հիվանդությունները շատ էին»: Մարդասեր բժիշկը, ստիպված ավելի հասկանալի լեզվով հայտնում է /"Առ. թերթ" հ.12, 1883/, որ յուրաքանչյուր գյուղ եւ քաղաք ունի իր աղքատները, որոնք ուշադրություն են պահանջում: Սովորաբար նրանց բնակարանները ցուրտ են, խոնավ, իսկ ընտանիքի անդամները մերկ են ու քաղցած: Եթե մարդը քաղցած է ու աղքատ, ուրեմն նա պետք է մուրա, գողություն անի եւ հիվանդանա... Հայտնի է, որ այդ աղքատ դասակարգի մեջ էլ հեշտությամբ են սկսվում ժանտախտի, խոլերայի, բնական ծաղկի ու տիֆի բռնկումները: Նման դեպքերում, իրենց պաշտպանելու նպատակով, ունեւոր դասակարգը պետք է նյութական ծախսեր անի աղքատ հիվանդներին բուժելու, կերակրելու եւ անվտանգ դարձնելու համար: Հակառակ պարագայում, պետք է համոզված լինեն, որ այդ ամայացնող վարակը, շատ շուտով մուտք կգործի ամեն մի գերդաստան, ինչպես նաեւ իշխանների դղյակներն ու թագավորի պալատը: Նման

հանգամանքներում՝ այդ հիվանդությունները ոչ մի տարբերություն չեն դնում հարուստների ու աղքատների միջեւ եւ անխնա ոչնչացնում են մարդկային հասարակությունը: Նա գտնում է, որ շատ դեպքերում էլ աղքատները բժշկի չեն դիմում դրամ չունենալու պատճառով: Նման դեպքում հիվանդները մնում են տեղերում, վարակը անցնում է մյուսներին եւ վերածվում համաճարակի: Տիգրանյանը առաջարկում է Երեւանում առանձնացնել երեք սենյականոց մի հիվանդանոց աղքատներին ու դրամ չունեցողներին ապահովվելու համար: «Բժիշկները պետք է պարտավորված լինեն՝ առանց վարձատրության, սպասարկեն նրանց եւ կասկածվող դեպքերը պառկեցնեն հիշյալ հիվանդանոցում եւ զբաղվեն նրանց բուժման գործով: Եւ այս հանգամանքը հնարավորություն կտա, վտանգավոր հիվանդությունների առաջին դեպքերը ժամանակին մեկուսացնելու ու ազատվելու դրանց տարածման վտանգից: Այսպիսով աղքատների կերակրումը, բուժումը եւ նրանց անվտանգ դարձնելը, ոչ թե ողորմություն պետք է համարել, այլ հարուստների համար ինքնապաշտպանության միջոց»:

1883-ին առողջապահականի 8 եւ 9 համարներում Տիգրանյանը այն միտքն է հայտնում, որ չնայած խոլերայի, ժանտախտի սկզբնապատճառը /հարուցիչները/ դեռեւս հայտնի չէ, սակայն, գիտենք, որ այդ հիվանդության զարգացումը կապված է ապականված շրջապատի, կեղտոտված ջրի, սննդամթերքի ու կրծողների տարածման հետ: Վարակի տարածման գործում առանձնապես վտանգավոր է համարում հիվանդների արտաթորանքը, կեղտոտված հագուստը եւ սպիտակեղենը: Նա առաջարկում է մասնավորապես սննդամթերքները եւ գործածվող ջուրը պահել փակ ամանների մեջ: Բանիմաց բժիշկը ճիշտ է կողմնորոշվում համաճարակների օջախներում եւ գործնական առաջարկություններ անում դրանց վերացման ուղղությամբ: Նա պահանջում է խոլերայի ժամանակ, շտապ կարգով, կազմակերպել առողջապահական մի հանձնաժողով, որը պետք է զբաղվի միայն այդ համաճարակի վերացման հարցերով: Առաջարկում է հիվանդներին պարտադիր կարգով առանձնացնել, այդ նպատակի համար տրամադրված հիվանդանոցներում: Իսկ եթե դրանք չկան, պետք է մի հարմար շենք վարձել, այն կահավորել ու հարմարեցնել հիվանդներին բուժման համար: Արգելել առողջներին հիվանդների հետ շփվելը եւ նրանց սննդի մնացորդների օգտագործումը: Հիշյալ հիվանդությունների համաճարակների ժամանակ, մահվան սպառնալիքի ներքո, խուճապահար ժողովուրդը, այլ ելք չգտնելով, հեշտությամբ հավատում է նաեւ զանազան սնոտիապաշտական լուրերի, որոնք հաճախակի նրանց տանում են բռնի գործողությունների:

Այսպես՝ 1347թվականի ժանտախտի համաճարակի ժրերին Գերմանիայում լուրեր են տարածվում, որ այդ սարսափելի "Սեւ մահի" պատճառը հրեաներն են, որոնք թունավորում են ջրհորները: Ձայրույթից կատաղած ամբոխը սկսում է հետապնդել եւ վրեժխնդիր լինել նրանցից: Այդ օրերին ամենասարսափելի ու ոչ մարդկային ձեւերով կրակի վրա այրում ու կոտորում են ավելի քան 100 հազար անմեղ հրեաների: Այս հանգամանքն էլ ավելի է նպաստում ամայացնող համաճարակի տարածմանը եւ մարդկային ցեղի ոչնչացմանը: "Առողջապահական թերթն" իր էջերում լուսաբանում է, որ որեւէ ազգի զարգացման աստիճանը որոշելու համար՝ բավարար չի այն ցուցանիշը թե, "որքան օճառ են գործածել, կամ նամակ գցել փոստը" այլ կարեւոր եւ որոշիչ է թե տվյալ ազգն ինչպիսի առողջապահական պայմաններում է ապրում: Այն ժողովուրդը, որի մեջ տարածված է հետամնացությունը, տգիտությունը, եւ չեն հետեւում գիտության առաջընթացին՝ առողջապահորեն ճիշտ ապրելու համար, այնտեղ մահաբեր համաճարակները պետք է տարածվեն եւ տանեն իրենց զոհերը:

"Վայ այն ազգին, որը արհամարհում է դիպչողական (վարակիչ) հիվանդությունների պատմությունը, մոռանում է անցյալի միլիոնավոր զոհերը եւ դրանց վարդապետությունը: Այսպիսի ազգը անկասկած կրելու է իր պատիժը եւ հեռվից դիտողը կասի՝ դու քո մեղքիդ պատիժն ես ստանում",- ասում է Տիգրանյանը:

Տիգրանյանը ժողովրդի առողջապահական հարցերը կապում է նաեւ նրա սոցիալ-տնտեսական վիճակի եւ սովորությունների հետ: Նա պայքարում է սնոտիապաշտպանության եւ նրա քարացած օրենքների դեմ, որոնք ունեն դարերի պատմություն եւ ամենուրեք նպաստում են հիվանդությունների տարածմանը:

Եւ պատահական չէ, որ "Գերեզմանները քաղաքի մեջ" հոդվածում ("Առողջ. թերթ" հ.1, 1882թ.) Տիգրանյանը դատապարտում է հոգեւոր եւ քաղաքային իշխանություններին, որոնք թույլ են տալիս դիակները թաղել եկեղեցիների տարածքում: Նա հիշատակում է, որ Երեւանում գործում են 6 եկեղեցի, որոնց սահմաններում էլ կատարվում են քաղաքի եւ նրա շրջակա գյուղերից եկած բնակչության բոլոր տեսակի ծիսակատարությունները, այդ թվում նաեւ հանգուցյալների հոգեհանգիստը եւ թաղումը: Վտանգն էլ ավելի է մեծանում, երբ նման տեղերում զանազան արարողություններից հետո, թաղում են նաեւ ժանտախտից, խոլերայից եւ այլ վարակիչ հիվանդություններից մահացածներին, ինչն ուղղակի ձեւով նպաստում է նոր համաճարակների բռնկմանը: Տիգրանյանն առաջարկում է նման վտանգ ներկայացնող դիակները

գերեզմանատուն տանել փակ դագաղներով եւ այդ նպատակին ծառայող դիակառքերով:

Գերեզմանատների վտանգի մասին խոսելիս՝ նա մտավախությամբ է նշում Երեւանում գործող Կոզեռ գերեզմանատունը, որի ստորգետնյա ջրերը, խառնվում են, նրա մոտով հոսող Սամուռ առվին, իսկ վերջինիս ջուրը բնակչությունն օգտագործում է խմելու նպատակով: Դրությունն ավելի ծանր է թուրքական գերեզմանատներում, ուր ելնելով նրանց ազգային կրոնի սկզբունքներից, դիակները լրիվ չեն ծածկվում հողով եւ գարշահոտություն են տարածում շրջապատում: Տիգրանյանը հաստատում է 1872-ի օգոստոսի 14-ին ժամը 3 անց 15-ին՝ Երեւանում ջրհեղեղի հետեւանքով Պողոս-Պետրոս եկեղեցու հեղեղատաջրով եւ տիղմով լցվելու իրողությունը: Եւ որ եկեղեցին տարիներ շարունակ պահպանում է բարձր խոնավություն եւ դառնում է վտանգավոր ու վատառողջ սրբավայր: Հարգարժան բժիշկը զգուշացնում է իր համաքաղաքացիներին, որ աղոթքներով տարված կանայք, երկար ժամանակ մնալով պատերի ներսում, ձեռք են բերում տկարություն եւ տարբեր բնույթի անբուժելի հիվանդություններ, որոնց պատճառը հանդիսանում է ոչ բավարար պայմաններում գործող եկեղեցին:

Տիգրանյանը շատ խիստ է դատապարտում այն ծնողներին, որոնք իրենց 12-13 տարիքի, ոչ չափահաս աղջիկներին ստիպելով ամուսնացնում են՝ այն էլ տարիքավոր մարդկանց հետ: Նա միաժամանակ զգուշացնում ու խորհուրդ է տալիս, որ ամուսնացող տղայի ու աղջկա միջեւ արյունակցական կապեր չպետք է լինեն: Փաստացի տվյալներով ցույց է տալիս, որ նման դեպքերում ծնվում են ոչ լիաժեք, արատավոր երեխաներ, որոնք տառապում են խլությամբ, լինում են ապուշներ ու թերզարգացած անձնավորություններ: Զգուշացնում է, որ հիվանդ ծնողներից նույնպես ծնվում են տկար ու ոչ լիարժեք երեխաներ, որոնք պատուհաս են դառնում հասարակության համար: Կան բազմաթիվ փաստացի դեպքեր, որ երեխաները, բացի գույքից ու հարստությունից, իրենց հիվանդ ծնողներից ժառանգում են նաեւ բարակացավ /թոքախտ/, սիֆիլիս /տիրամոր ցավ/, ընկնավորություն /ուշագնացություն/ եւ այլն, որոնք անբուժելի հիվանդություններ են եւ ի վերջո քայքայում են ընտանիքները: Այստեղ նա առաջարկում է ժողովրդին կարդալ նաեւ բժիշկ Ա. Շահազիզյանի "Վեներական ախտ", գրքույկը, որտեղ շատ հանգամանորեն բերված են սիֆիլիսից պաշտպանվելու բոլոր հնարավոր միջոցները:

Լ.Տիգրանյանի կողմից խմբագրվող ու հրապարակվող «Առողջապահական թերթ»-ում, հոդվածագիր Ավետիք Բաբայանը գրում է նաեւ հայերի մեջ նոր մուտք գործած մի վտանգավոր սովորության "պռոշտի անելու" մասին: ("Առողջ.թերթ" հ.1, 1881թ.):

Այնուհետեւ նա շեշտում է, որ այս վտանգավոր սովորությունը, շատ արագ տարածվում է նաեւ գավառներում ու գյուղական բնակչության մեջ: Տոն օրերին, ինչպես նաեւ օտարությունից եկածները՝ ազգականներին ու բարեկամներին հանդիպելիս, համբուրվում են, այն էլ շրթունքներից՝ 3 անգամ: Շատերն էլ "պռոշտին" համարում են կրթված ու զարգացած լինելու նշան: Հեղինակը նշում է, որ "պռոշտին" վատ սովորություն է, քանի որ այդ ճանապարհով տարածվում է թոքախտ, սիֆիլիս, բկացավ, հարենք եւ այլն: Այստեղ քննադատական խոսք է ուղղվում նաեւ հայ վաճառականներին, որոնք եւրոպական քաղաքներից վերադառնալիս, իրենց թանկարժեք ապրանքների հետ, տուն են բերում մի զարհուրելի հիվանդություն, որը կոչվում է սիֆիլիս: Դրանով առաջին հերթին վարակում են իրենց անմեղ ընտանիքներին եւ ապա "պռոշտի" անելով այն փոխանցում մյուսներին: Վերջում հոդվածագիրը հայտնում է այն կարծիքը, որ պետք է հրաժարվել պռոշտի անելուց: Սխալ է, միմյանց ողջունելու նպատակով զգացմունքներն արտահայտել համբույրի միջոցով: Անգամ միմյանց ձեռք սեղմելով՝ ողջունելը, հեղինակը համարում է ոչ հաճելի, եւ ոչ հիգիենիկ միջոց: Նա ավելի հարմար ու անվտանգ է համարում միմյանց ողջունել մարմնի թեթեւակի շարժումով գլուխը քիչ առաջ թեքելով եւ աջ ձեռքը մի փոքր վեր բարձրացնելով, որով հանդիպակաց մարդուն ցույց է տրվում հարգանք եւ ուշադրություն:

Թերթում բերված տվյալները ժողովրդին համոզում են, որ շատ դեպքերում էլ սկսվող հիվանդության պատճառը, հանդիսանում է հենց ինքը՝ տվյալ անձը: Այս կապակցությամբ հիշեցնում է մարդու շատակերության վտանգի եւ նրա անբուժելի հետեւանքների մասին: Տիգրանյանը շեշտում է, որ ուտելիքի նկատմամբ ունեցած ագահությունը՝ երբեք մարդուն առանց պատժի չի թողնում:

Տիգրանյանը, բազմաթիվ առիթներով, իր թերթի էջերում լուսաբանում է նաեւ մարդկային հասարակության համար ալկոհոլի եւ ծխախոտի բացասական ազդեցության մասին: Ալկոհոլը կործանում է ոչ միայն հարբեցողին, այլեւ նրա ընտանիքը: Նման հանգամանքներում ծնվում են ոչ լիարժեք, ցածր ընդունակություններով երեխաներ, որոնք հետագա ողջ կյանքում տառապում են եւ բեռ դառնում հասարակության ուսերին: Տիգրանյանը դժգոհությամբ է խոսում իգական սեռի այն անհատների մասին, ովքեր, մոռանալով իրենց կանացիությունը, գեղեցկությունը եւ հմայքը, տարվում են ծխախոտով եւ ալկոհոլամոլությամբ: Նա դեռ իր ժամանակին նշում է, որ հարբեցողությամբ տառապողների, մի մասի մոտ նկատվում է լուսնոտություն հիվանդությունը, իսկ շատերն էլ ի վերջո դառնում են հանցագործներ:

"Առողջապահական թերթ"-ի հասցեով, փաստացի տվյալներով հիմնավորված, թղթակցություններ է ուղարկում նաեւ Սորբոնի համալսարանի ուսանող, ապագայում ճանաչված գիտական, հասարակական գործիչ, Երեւանի բժշկական ինստուտի դասախոս եւ շատ սիրված պրոֆեսոր Վահան Արծրունին: Նա հիմնականում անդրադառնում է տուբերկուլյոզի, ալկոհոլի եւ ծխախոտի քայքայիչ ու կործանարար դերին ու նրանց անբուժելի հետեւանքներին:

***

Տիգրանյանը դատապարտում է այն անձանց, ովքեր կարծում են, որ միայն բժիշկը պետք է գիտենա մարդակազմությունը, առողջապահության կանոնները եւ հիվանդություններից պաշտպանվելու միջոցները:

Այս առումով նա հիշատակում է, որ 1882-ին օգոստոսի 20-ից մինեւ սեպտեմբերի 12-ը Թիֆլիսում տեղի է ունենում "Հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովը", որը մանրամասնությամբ գրի է առնում Հ. Նազարյանը /Թիֆլիս 1883/: Ժողովին մասնակցում են Ղազարոս Աղայանը, Պերճ Պռոշյանը, Գրիգոր Արծրունին եւ այլ հայտնի մարդիկ: Այդ ժողովին մասնակցում են նաեւ անվանի բժիշկներ Ավետիք Բաբայանը, Շահպարոնյանը, Լեւոն Տիգրանյանը եւ ուրիշներ: Օգտվելով առիթից, Տիգրանյանը քննադատում է դրվածքը եւ հարց բարձրացնում դպրոցներում առողջապահության եւ մարմնամարզության դասավանդման անհրաժեշտության մասին: Նա պահանջում է, որ դպրոցը պարտավոր է զարգացնել, ոչ միայն երեխայի միտքը, այլեւ նրա մարմինը, քանի, որ ուսումն առանց առողջության նշանակություն չի կարող ունենալ մարդու համար:

Անվանի բժիշկը, տարիներ շարունակ, վարում է նաեւ Երեւան քաղաքի հայկական թեմական դպրոցների հոգաբարձուի պաշտոնը: Այս հանգամանքն էլ հնարավորություն է տալիս նրան հաճախել ուսումնարանները, հայկական դպրոցներում ծանոթանալ ուսումնական ծրագրերին եւ կրթության դրվածքին:

Նա սեփական աչքով է տեսնում այդ կրթօջախների պարզունակ, հակաառողջապահական պայմանները եւ երեխաների հիվանդոտ տեսքն ու նրանց անելանելի վիճակը:

Դրությունը ավելի հուսահատական վիճակում է լինում գավառական եւ գյուղական դպրոցներում, ուր ամեն բան թողնված է բախտի քմահաճույքին: Վաղարշապատում, Իգդրում եւ շատ այլ տեղերում ուսումնարանները զրկված են լույսից, չորությունից, եւ տարրական առողջապահական պայմաններից: Երեխաները ուսումնարաններում գրում են տետրերը ծնկներին դրած, իսկ կարդալիս գիրքը դնում են հատակին: Նման պայմաններում սովորող երեխաների կրծքի վանդա-

կում եւ ողնաշարի շրջանում առաջանում են շեղումներ եւ այլ բնույթի անուղղելի փոփոխություններ: Տիգրանյանն առաջարկում է բոլոր ուսումնարաններում երեխաներին սովորեցնել հյուսնի արհեստը եւ պահանջել, որ ամեն մի աշակերտ ինքն իր համար աթոռ եւ սեղան պատրաստի:

"Ուսումնարանների գլխավոր թերությունը" խորագրով հոդվածում (հ.3, 1883), Տիգրանյանը սուր քննադատության է ենթարկում ուսումնական ծրագրերը եւ դասավանդման կարգը: Այդ մասին նա գրում է. «Աշակերտներին սովորեցնում են այն՝ ինչը կյանքում նրանց երբեք պետք չի գալիս: Եվ եթե աշակերտին ստիպում են սերտել՝ կրոնական դասերը, որեւէ երկրի գետերի ու սարերի անունները, կամ էլ տարբեր թռչունների կտուցների, փետուրների նմանությունները ու տարբերությունը, ապա ինչու՞ նա չպետք է գիտենա նաեւ այն, ինչն ամենից մոտ է իրեն, սեփական մարմնի կազմությունը եւ նրա օրգանների գործունեությունը»: Նա պահանջում է, որ ուսումնարաններում դասավանդվի նաեւ "Առողջապահություն" գիտությունը, որը "հացի նման անհրաժեշտ է բոլորին": Եվ վերջապես հենց ուսումնառության տարիներից երեխաներին պետք է սովորեցնել, թե ինչ միջոցներով է հնարավոր պաշտպանվել հիվանդությունից, կամ ինչպես պահեն մարդիկ իրենց առողջ եւ հիվանդ ժամանակ»:

***

Ակադեմիկոս Լ. Ա. Հովհաննիսյանի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մինչեւ 18-րդ դարի վերջը՝ Հայաստանի բնակավայրում չի եղել ոչ մի բժիշկ, ինչպես նաեւ գոյություն չի ունեցել անգամ ամենահասարակ տիպի որեւիցե բժշկական հիմնարկ:

Անդրադառնալով ժողովրդական բժիշկների գործունեությանը, Տիգրանյանը գրում է. «Քանի որ մեր շատ գավառներում ու գյուղերում դեռեւս բժշկի ոտքը չի դիպել, անմտություն կլինի ժողովրդական բժիշկներից հրաժարվելը եւ դրանց դերը նսեմացնելը»:

Հայաստանի գավառներում եւ քաղաքներում դարեր շարունակ գործել են ժողովրդական կամ ինչպես ընդունված է ասել նահապետական բժիշկները: Դրանք ժողովրդի միջից ելած ունակ եւ բանիմաց անհատներ են, ովքեր իրենց նախնիներից ժառանգել են հիվանդներին օգնելու անցյալի փորձը եւ հնարավոր միջոցները:

Այդ ժողովրդական բժիշկները, մինչեւ 19-րդ դարի վերջը, հաճախ նույն տոհմի ներկայացուցիչներ էին: Եվ պատահական չէր, որ առանձին ընտանիքներին հայտնի բժշկական միջոցները եւ հիվանդներին օգնելու եղանակները, համարվում էին տվյալ տոհմի մենաշնորհը եւ նրանք այդ փորձն ու գիտելիքները փոխանցում էին

ցիայց իրենց սերունդներին: Ժողովրդական բժիշկները հաջողությամբ բուժում էին վերքերի որոշ տեսակներ, հոդախախտերը, ոսկրային կոտրվածքները եւ առանձին դեպքերում էլ կատարում էին նաեւ վիրահատություններ:

Այս առումով Տիգրանյանը նշում է, որ 1878-ի դեկտեմբերի 18-ին ինքն ականատես է լինում, թե ինչպես ժողովրդական փորձառու բժիշկ հախվերիզցի ռամիկ Գեւորգ Բունդ[illegible]յանը վիրահատման է ենթարկում 7 տարեկան տղային ու հեռացնում նրա միզապարկի քարը: Այստեղ միաժամանակ նկարագրվում է վիրահատման տեխնիկան եւ նրա ընթացքը ("Առողջապահական թերթ", հ.1, 1881):

Ի. Շոպենը հիացմունքի խոսքեր է գրում ինքնուս, փորձառու եւ մեծ ժողովրդականություն վայելող անհատ «Երեւանի քաղաքային բժիշկ Տեր-Կարապետովի» մասին (վերջինս համաճարակների օջախներում միջոցառումներ անցկացնելու եւ հիվանդների բարեհաջող բուժման համար արժանացել էր ռուս աստիճանավորների շնորհակալությանը): Տեր-Կարապետովի համարձակությունը զարմանք է պատճառում բոլորին Նա անտեսելով սեփական անձի վարակման վտանգը, կտրում եւ բաց է անում ժանտախտով հիվանդների մեծացած ավշային գեղձերը ու շատերին փրկում անխուսափելի մահից:

Նման փորձառու բժիշկների հեղինակությունը գնալով ավելի է տարածվում եւ նրանք հայտնի են դառնում նույնիսկ հեռավոր վայրերում: Դա է պատճառը, որ անելանելի դրության մեջ գտնվող հիվանդատերերն, իրենց հարազատներին փրկելու այլ ելք չունենալով, ստիպված են լինում գավառից գավառ անցնել նման բժիշկներին գտնելու համար:

Տիգրանյանը բժշկությունը, ինչպես նաև հիվանդություններից պաշտպանելը ու բուժման անհրաժեշտությունը համարում է մարդկության հասակակիցը: Նա գտնում է, որ ժողովրդի մեջ կան եւ շատ շնորհալի փորձառու դեղագործներ, որոնք բույսերից ու այլ նյութերի համակցումից պատրաստում են բուժող դեղամիջոցներ /միլամ/ եւ այլ խառնուրդներ՝ հիվանդներին օգնելու նպատակով: Տիգրանյանը ցանկանում է թերթի միջոցով ճշտել Հայաստանի գավառներում եւ գյուղերում գործող ժողովրդական բժիշկների, տեղը, թիվը, քանի որ նա նպատակադրվում է Երեւանում մի առողջապահական կենտրոն ստեղծել եւ ժողովրդական բժիշկներին կապել այդ կենտրոնի հետ, որով հնարավոր կլինի նրանց որեւիցե կերպ օգնել եւ ուղղություն տալ:

Նա պահանջում է, որ նամակագրական կապերի միջոցով, դեղագործներն իրեն հայտնեն, թե որ բույսերից ու խառնուրդներից եւ ինչպիսի եղանակով են պատրաստվում դեղորայքը՝ ցանկություն ունենալով անձամբ ստուգել դրանց ազդեցությունը կենդանի օրգա-

նիզմի վրա եւ ապա արդյունքների մասին գրել իր կողմից խմբագրվող թերթում:

1883-ից Տիգրանյանը կազմում է բուժական նպատակներով օգտագործվող բույսերի լատիներեն, հայերեն եւ ռուսերեն բառարանը: Վերջինս գրելու պահին, նա ձեռքի տակ ունենում է Ամիրդովլաթի ձեռագիր բժշկարանը եւ Ստեփան Շարիմանյանի Տփխիսեցու բառարանը /1818թ./: Բուժական նպատակներով գործածվող բույսերի բառարանի վրա Տիգրանյանը սկսում է աշխատել դեռեւս ուսանողական տարիներից եւ այդ մասին որոշակի տվյալներ նա իր հետ բերում է Գերմանիայից: Այս առթիվ նա գրում է. «Տպագրելով բառարանս, խնդրում եմ մեր հասարակությանը, մանավանդ հայ բժիշկներին, օգտվել եւ հարստացնել այն»:

Եվ այդպես Տիգրանյանի հեղինակությունը աստիճանաբար դուրս է գալիս Հայաստանի սահմաններից: Որպես ճանաչված մասնագետի նրան հրավիրում են տարբեր վայրերից: Այդ մասին է խոսում նաեւ այն փաստը, որ այդ տարիներին որպես ձեռնահաս ու բանիմաց համաճարակագետի նրան են գործուղում Ստավրոպոլ՝ դիֆթերիայի համաճարակի դեմ պայքարելու:

***

Տիգրանյանի կողմից խմբագրվող թերթում, բացի առողջապահական թեմաներից, բժշկությանը վերաբերվող առանձին հարցերից, տպագրվում են նաեւ տարբեր բնույթի լուրեր, հայտարարություններ, վիճակագրական տվյալներ, արտասահմանյան հեղինակներից արված թարգմանություններ եւ այլն:

Այստեղ տպագրվում են նաեւ կին թարգմանիչներ Նունե եւ Փառանձեմ Մելյանների օտար լեզուներից հայերեն թարգմանած "Դիֆթերիայի բժշկվելը" եւ "Բարակացավը" /ֆտիզիս/, հոդվածները: Նախավերջին հոդվածներից մեկում ("Առողջապահական թերթ", հ.1, 1884թ.) Տիգրանյանը արդեն մեղադրում է հայ բժիշկներին եւ ուսանողներին, ովքեր իրենց խոստումները խախտում են եւ թղթակցություններ չեն ուղարկում թերթին: «Այն ժամանակ, որ դեռ մտադիր էի հրատարակել թերթեր, ամեն կողմից լսում էի համակրական խոսքեր ու խոստումներ: Սակայն 2 տարվա ընթացքում հայ բժիշկները գրել են ընդամենը 15 հոդված, որը կազմել է 74 էջ, հայ ուսանողների կողմից ուղարկված է թերթին 2 թղթակցություն: Մինչդեռ իմ կողմից գրված է 497 էջ, որը հավասար է մի մեծ գիրքի»,- գրում է նա: Նա կրկին անգամ հիշեցնում է հայ բժիշկներին եւ ուսանողներին, որ շտապեն եւ խմբագրության հասցեով ուղարկեն նոր թղթակցություններ, հակառակ դեպքում անհնար է դառնում "Առողջապահական թերթի" հետագա հրատարակումը: Մեր կարծիքով, հոդվածների ոչ

բավարար քանակն է պատճառը, որ տպագրված թերթերի մեծ մասը եւ երբեմն էլ առանձին համարներ անբողջապես գրվում են միայն Տիգրանյանի կողմից:

Այսպիսով, բերված տվյալները մեկ անգամ եւս հաստատում են, որ Լեւոն Տիգրանյանը ոչ միայն "Առողջապահական թերթի" խմբագիրն է այլեւ նրա գլխավոր հոդվածագիրը:

Անձնազոհ բժիշկն այդ տարիներին աշխատում է մեծ լարվածությամբ եւ ամեն բան անում է, որ իր կողմից հիմնադրված թերթը գոյատեւի եւ շարունակվի նրա տպագրությունը:

Տպագրված հոդվածներից երեւում է, որ Տիգրանյանը աշխատում է համոզել թղթակիցներին, որ "Առողջապահական թերթի" հրատարակումից իրեն ոչ մի եկամուտ չի մնում եւ հակառակը՝ շատ ծախսեր էլ կատարվում են իր հաշվին: Սակայն որպես խմբագիր՝ շահագրգռված կողմ, ինքը դեռ չի հուսահատվում անհաջողությունից եւ սիրով շարունակում է իր հինմադրած թերթի հետագա հրատարակումը:

Ինչպես երեւում է գործերի ընթացքից, հետագայում՝ էլ ավելի են պակասում խմբագրության հասցեով ուղարկվող թղթակցությունները եւ վերջում Տիգրանյանը մնում է գրեթե միայնակ: 1804-ի վերջին, 12-րդ համարի տպագրումից հետո դադարեցվում է "Առողջապահական թերթի" հետագա հրատարակումը: "Առողջապահական թերթի" հրատարակման դադարեցումը մեծ ցավ է պատճառում նրա գործունյա խմբագրին եւ ընթերցասեր հասարակությանը:

Տիգրանյանը շատ է ափսոսում, մեծ ջանքերով ու ծախսերով հիմնադրված իր հանդեսի կորուստը, սակայն ոչինչ անել չի կարողանում եւ թերթն անցում է պատմության գիրկը:

՝՝՝

1881-ին Հ. Տիգրանյանի մասնակցությամբ ու ջանքերով Երեւանում հիմնադրվում է "Հայասեր-Ազգասեր" կազմակերպությունը, որը նպատակ է հետապնդում Հայաստանի արեւմտյան հատվածի ազատագրումը եւ հայրենիքի երկու կեսերի միաձուլումը: Նա կապված է լինում Մոսկվայի, Թբիլիսիի ազատագրական եւ Կարինի "Պաշտպան Հայրենյաց" գաղտնի կազմակերպությունների հետ, ինչպես նաև արեւմտյան Հայաստանում գործող շատ հայրենասերների եւ ֆիդայական խմբերի հետ եւ օգնում է նրանց շատ հարցերում: Այդ օգնությունը շարունակվում է նրա ողջ կյանքի ընդացքում: Նա գլխավորում է Կովկասի հայոց բարեգործական ընկերության Երեւանի

Լևոն Տիգրանյանը բաղաքագլխի համազգեստով

մասնաճյուղը: Օգտվելով առիթից, անվանի բժիշկը հանգանակություններից եւ այլ միջոցներից ծեռք բերված գումարներով զենք է ծեռք բերում եւ ուղարկում արեւմտյան Հայաստանում մարտնչող հայրենասերներին:

Հարկ է նշել, որ գնալով ավելի են ընդարձակվում բժիշկ Տիգրանյանի գործունեության ոլորտները: Եվ ահա շուտով նա թափանցում է Թուրքիա եւ ավելի մոտիկից ծանոթանում արեւմտյան Հայաստանում մարտնչող խմբավորումներն եւ՝ հանդիպումներ ունենում նրաց առաջնորդների հետ:

1881-ին Ռուսական կառավարությունը նրան, որպես բանիմաց մասնագետի, ուղարկում է Իրան, ժանտախտի, համաճարակի դեմ պայքարելու: Օգտվելով առիթից նա Սալմաստի գավառով անցնում է Վան եւ ռուսական փոխհյուպատոս Կ. Կամսարականի հետ բանակցություններ է վարում հայ ազատագրական շարժման հարցերի շուրջ: Այդ ընթացքում Տիգրանյանը տեղեկություններ է հավաքում նաեւ հայ ժողովրդի այն խմբավորումների մասին, որոնք հարկադրված ինքնապաշտպանական կռիվներ են մղում բռնակալության դեմ:

Լ.Տիգրանյանը խիստ լավատես է եւ համոզված, որ տեսնելու է հայրենիքի լիակատար ազատագրումը: Նրա անձնազոհ ձգտումները շատ հաճախակի նրան դուրս են բերում բժշկի մասնագիտական շրջանակներից եւ Տիգրանյանը հանդես է գալիս որպես հասարակական գործիչ, կազմակերպիչ եւ մարտնչող հայրենասեր: Տիգրանյանի քննդատական հոդվածները եւ համարձակ ելույթները շուտով իրեց վրա են բեւեռում կառավորական օրգանների ուշադրությունը, որոնք էլ նրան սկսում են մեղադրել ազգային ազատագրական շարժման մեջ:

Ասենք, որ այդ առիթով, քննչական օգանները մեղադրական գործեր են հարուցում մոտ 40 հայ մտավորականների նկատմամբ: Նրանց մեղադրում են "Հայասեր-Ազգասեր" խումբ կազմելու, հակապետական ու հակառուսական աշխատանքներ ծավալելու մեջ:

Նրանց նկատմամբ կատարվում էին բռնություններ նաեւ ստուգումներ ու խուզարկություններ: Ինչպես երեւում է Թ. Հակոբյանի տվյալներից /"Երեւանի պատմությունը", էջ 263 217/, 1883-ի ապրիլի 24-ին փաստաբան Ջալալյանի, բժիշկ Լ.Տիգրանյանի, եւ Երեւանի օրիորդաց դպրոցների տեսուչ օր. Գ.Հովհաննիսյանի բնակարանները խուզարկության են ենթարկվում:

Տիգրանյանի մոտ հայտնաբերված մի քանի աննշան թղթերը առանձնապես հիմք չեն ծառայում նրան մեղադրելու համար: Բայց, այնուամենայնիվ, Տիգրանյանին մեղադրում են՝ Պոլիսի, Վանի ու Խառկոնիսի գործող ազգային խմբերի հետ կապեր ունենալու մեջ: Նշվում է, որ մեղադրյալներն իրենց նպատակին հասնելու համար

ցանկացել են արեւմտյան Հայաստանում, Կիլիկիայում եւ ռուսական Հայաստանում միաժամանակ ապստամբություն սկսել: Այս մասին Տիգրանյանը իր հիշատակարանում գրում է, որ իր գործունեության մեջ ոչ մի լուրջ մեղադրանք չկա, դրանում համոզված են նաեւ քննիչները, սակայն, քանի որ գործը սկսված է մի բան պետք է հորինեն ու մեղադրեն՝ ստեղծված իրավիճակից դուրս գալու համար:

Դատաքննչական օրգանները, Տիգրանյանին վերջնականապես մեղադրում են սեպարատիզմի մեջ, որ նա ձգտում է վերականգնել անկախ ազատ Հայաստանը: Այդ նպատակով էլ նա գաղտնի հանգամանքներում հայկական բանակ է կազմավորում եւ զինվորների հետ հատուկ պարապմունքներ է անցկացնում: Բացի դրանից նա հակապետական մտքեր է հաղորդում ուսանողներին եւ անձամբ մասնակցում է գաղտնի գործող ազգային խմբի աշխատանքներին:

Չնայած անհիմն փաստերին, Տիգրանյանին ենթարկում են վարչական տույժի, որի համաձայն նա 3 տարով պետք է հեռանա Երեւանից:

Բժիշկ Լ.Տիգրանյանից անբաժան է մնում նաեւ նրա երիտասարդ կինը: Սկզբում նրանք լինում են Պետերբուրգում ուր հանդիպում են Մ. Սանասարյանին: Վերջինս ուրախությամբ է ընդունում քրոջ որդուն եւ նրա հարսնացուին՝ զգալի նյութական օգնություն ցույց տալով նրաց: Այնուհետեւ նրանք շրջագայում են եւրոպական քաղաքներում՝ առավել տեւականորեն բնակվելով Բեռլինում, ուր Տիգրանյանն աշխատում է կլինիկայում՝ նպատակ ունենալով էլ ավելի խորացնել իր բժշկական գիտելիքները: Տիգրանյանն արտասահմանում մնում է 2 տարի՝ 1885-1886 թթ., որից հետո նորից վերադառնում է Երեւան:

Փաստերը ցույց են տալիս / Թ.Խ.Հակոբյան, 1963 թ. էջ 216/, որ Երեւանի եւ Թիֆլիսի հատուկ հանձնաժողովները ու այլ ընկերություններ դրամական նվիրատվություններ են հավաքում՝ ազատագրական պայքարի ելած արեւմտահայերին օգնելու նպատակով:

1890թ. Փարիզում, անժառանգ մահանում է Մկրտիչ Սանասարյանը: Նա իր հարստության մի մասը կտակում է քրոջ որդուն՝ Լեւոն Տիգրանյանին: Այդ կտակում, բացի այլ հարստություններից, եղել է նաեւ 100 հազար ռուբլի կանխիկ դրամ:

Թե ինչ նպատակի համար է ծախսվում հետագայում այդ դրամը՝ պազ չէ, սակայն մեր կարծիքով՝ քեռուց ստացած գումարի զգալի մասը /եթե ոչ բոլորը/ Տիգրանյանը տրամադրում է արեւմտյան Հայաստանում եւ այլ վայրերում մարտնչող հայրենասերների զինմանն ու նրանց կարիքավոր ընտանիքներին: (*Այդ մասին, 1949-ին Գյումրիում աշխատածս տարիներին՝ (Հ. Հովասափյան) մեզ անձամբ*

պատմել է մի 80-ամյա մշեցի, որը ականատես է եղել հայկական կոտորածներին, մասնակցել ազատագրական պայքարին եւ ֆիդայական շարժման սուրբ գործին: Ըստ նրա տեղեկությունների 1895-ից մինչեւ 1901 թվականները, նա ինքը, մշեցի 2 այլ նվիրյալ տղաների հետ, իրենց փոքրիկ քարավանով /2 ձի և 1 ջորի/, ժամանակ առ ժամանակ, Սասնա լեռներից հասել են Երեւան եւ ներկայացել հայտնի բժշկապետ Լ.Տիգրանյանին: Նրանք խիստ գաղտնի հանգամանքներում, դեպի երկիր են փոխադրել զենք ու զինամթերք երբեմն էլ կանխիկ ոսկյա դրամ: Պետք է խոստովանել, որ իմ զրուցակից մշեցին (որի անունը չեմ կարող հիշել) վերջում դժգոհ մնաց ինձանից եւ իր զարմանքն հայտնեց, որ բժիշկ լինելով հանդերձ ես անտեղյակ եմ երանելի բժշկապետ Լեւոն Տիգրանյանի ազգասիրական գործունեությանը: Ասենք, որ մշեցի հայի այդ կշտաբանքի խոսքերն էլ ստիպեցին մեզ հետագայում զբաղվել անվանի բժշկապետի կյանքի ու գործունեության ուսումնասիրման հարցով): Ազգասեր բժշկապետն այդ գումարը սիրով ուղարկում է նաեւ ծնողազուրկ երեխաներին, ֆիդայիններին ու նրաց շատ կարիքավոր ընտանիքներին::

Այդ տարիներին էլ (1890թ.) բազում դժվարություններից հետո, Լ.Տիգրանյանին հաջողվում է Երեւանում բաց անել առաջին բուժարանը եւ 12 մահճակալանոց փեքրիկ հիվանդանոց՝ ներքին հիվանդությունների եւ վիրաբուժական բաժիններով: Տիգրանյանի կողմից կազմվում է նաեւ բուժարանի եւ հիվանդանոցի գործունեության, իր բովանդակությամբ խիստ ժողովրդական, կանոնադրությունը: Կանոնադրության մեջ առաջին անգամ հարց է բարձացվում անհետաձգելի հիվանդությունների դեպքում անվճար բժշկական օգնություն ցույց տալու մասին: Հիվանդների ընդունելությանը կատարվում է ամեն օր, ծաղկի դեմ պատվաստումները կատարվում են անվճար եւ բոլոր ցանկացողներին, աղքատներին դեղորայքը տրվում է 30 տոկոս զեղչ գներով, աշխատավարձ ստացող բժիշկները պարտավոր են հիվանդներին այցելել նաեւ տներում՝ առանց լրացուցիչ վճար վերցնելու եւ այլն:

Առանց սխալվելու կարելի է ասել, որ նման հանրամատչելի եւ ժողովրդական հիմունքներով բժշկական օգնությունը նորություն է լինում Երեւանի բնակչության համար:

Նման մարդասիրության եւ բարեգործությունների համար Տիգրանյանը վայելում է ժողովրդի անսահման սերը եւ հարգանքն, որն էլ նրա միակ մխիթարանքն էր:

***

1894թ.-ի մարտ ամսին Տիգրանյանը ընտրվում է Երեւանի քաղաքագլուխ:

Սակայն ժամանակի անարդար բարքերը եւ կամայականությունները առաջին իսկ օրվանից սկսում են խանգարել նրա ազատ գործունեությանը: Իր ժողովրդի հոգսերով ապրող հայրենասեր բժիշկն, ի պաշտոնե, աշխատում է բարեկարգել Երեւանը, բարձրացնել նրա սանիտարական վիճակը, վերափոխել հետամնացության մեջ խարխափող ժողովրդի կենցաղային պայմանները եւ պայքարել սնոտիապաշտական վնասակար սովորությունների դեմ, որոնք նպաստում են հիվանդությունների տարածմանը:

Երեւանին վերաբերող որեւիցե հարցի քննարկման ժամանակ, Տիգրանյանը միշտ առաջինն է հայրենի քաղաքի օգտին ճշմարիտ ու անաչառ խոսք ասում: Նա ամեն կերպ աշխատում է պաշտպանել ձեռք բերած հաջողությունները, ամրացնել եւ կատարելագործել դրանք: Սակայն այդ ամենը դուր չեն գալիս նահանգապետին եւ պետական այլ պաշտոնյաների: Նրանք զգում են, որ գործ ունեն զորեղ անհատի հետ, որը կարողանում է թափանցել նաեւ պետական հարցերի ոլորտը: Չնայած նրան, որ քաղաքագլուխն ընտրվում է 4 տարին մեկ անգամ՝ Տիգրանյանը 8 ամիս անց ստիպված հրաժարվում է այդ պաշտոնից: Հարկ է նշել, որ դրանից հետո էլ Տիգրանյանը նույն ջանասիրությամբ շարունակում է իր առաջարկությունները ու տեսակետները ներկայացնել կառավարությանը եւ հետեւել նրանց իրագործմանը: Նա պահանջում է Երեւանի ընդհանուր սանիտարական պայմանների բարելավում, Գետառի եւ քաղաքի փողոցներով ու բակերով հոսող առուների ապականված ջրերի՝ խմելու նպատակով օգտագործելու արգելում, տարբեր թաղերում գոյացած ճահիճների չորացում եւ քաղաքի աղբակույտերից մաքրում:

Այս կապակցությամբ հիշատակման արժանի է եւս մի փաստ: Դեռեւս 1904թ.-ի մայիսի 26-ին Դուման ստիպված է լինում բժիշկ Տիգրանյանի մասնակցությամբ քննարկել Երեւանում կոյուղու կառուցման հարցը /Թ. Հակոբյան "Երեւանի պատմություն", էջ 357/: Խորհրդակցության արդյունքում որոշվում է Լ.Տիգրանյանի նախագահությամբ, հինգ հոգուց բաղկացած մի հանձնաժողով կազմել, որը պետք է զբաղվի կոյուղու նախագծումներով, նախահաշիվների պատրաստմամբ, գումարների հայթայթմամբ եւ այլ աշխատանքներով: Ասենք, որ մոտ մեկ տարի տեւած համառ աշխատանքներից հետո, հարգարժան բժշկապետը ու նրա հանձնաժողովը կազմում են նախագծեր ու գտնում բազմաթիվ դժվարին հարցերի դրական լուծումներ՝ դրանք ներկայացնելով Դումայի ուշադրությանը: Սակայն 1905թ.-ի մարտին կայացած Դումայի նիստում վերջնականապես մերժվում է Երեւանում կոյուղու կառուցման պլանը:

Այդ նուն թվականին էլ ս.Էջմիածնում տպագրվում է Տիգրանյանի "Մանկական պարտեզ" գիրքը, որն ամբողջապես նվիրված է լինում մայրերին եւ լուսաբանում է մանկավարժության, դաստիարակության ու առողջապահության շատ հարցերին:

Լ.Տգրանյանն, անփոփելով իր տարիների դիտողությունները, թողնում է մի անտիպ աշխատություն եւս "Իմ հուշերը" վերնագրով: Այդ օրագիր մատյանն առաջին անգամ ուսումնասիրում է ակադեմիկոս Լեւոն Հովհաննիսյանը: Նա գրում , որ Տիգրանյանն այդ օրագիրը գրել է իր երեխաների համար, սակայն չի հասցրել այն վերջացնել եւ թերի է մնացել: Ըստ էության դա մի սեւագիր աշխատություն է, որը դուրս է գալիս ընտանեկան հարցերի սահմաններից եւ ընդգրկում է ավելի լայն ուսումնասիրությունների ոլորտ, որոնք կապված են ազգային ազատագրական հարցերի հետ: Այդ մատյանում գիտական արժեք ներկայացնող հուշեր են պահպանված 19-րդ դարի երկրորդ կեսի հայ հասարակական ու քաղաքական գործիչներ Մ. Նալբանդյանի, Մ. Սանասարյանի, գեներալ Լորիս Մելիքովի, Կ. Կամսարականի, Կ. Եզյանի եւ ուրիշների մասին:

***

Լեւոն Տիգրանյանն իր մահկանացուն կնքում է 1906թ.-ի փետրվարի 16-ին, Երեւանում, 64 տարեկան հասակում: Նրա մահը մեծ վիշտ է պատճառում հայ ժողովրդին, նրա առաջադեմ գործիչներին եւ, մասնավորապես, Երեւանի բնակչությանը, որը լավ էր ճանաչում իր գործունյա եւ ազգասեր բժիշկին:

Այդ օրերին ընդարձակ մահախոսականներ են գրվում անվանի բժիշկի կյանքի եւ գործնեության մասին:

Առանձնապես սգում են "Մուրճ" եւ "Լումա" ամսագրերի խմբագրությունները, որտեղ տարիներ շարունակ թղթակցել է Տիգրանյանը: (Ի դեպ հիշեցնենք, որ այս հանդեսներում է, որ առանձին մասերով, հրատարակվել են Տիգրանյանի կողմից գերմաներենից հայերեն թարգմանած Գյոթեի "Հերմեն Դորթեա" /"Մուրճ" 1-4 1895/, "Ֆաուստ" /"Մուրճ" 6-12 1899թ./, "Տորքուատո տասսո" /"Լումա" 1-2 1901թ./ գործերում և այլն: 1903թ.-ին "Լումա" հանդեսի 5-րդ համարում տպագրվում է նաեւ Տիգրանյանի "Դորպատի համալսարանը եւ նրա հայ ուսանողները" խորագրով աշխատությունը, որն արժեքավոր տվյալներ է պարունակում 1830 թվականից մինչեւ 1892 թվականները ընկած ժամանակաշրջանի մասին:

ԲԺԻՇԿ ԼԵՎՈՆ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Լեւոն Տիգրանյանը (1842-1906) բժիշկի իր գործունեությանը զուգահեռ, թողել է նաեւ հարուստ գրական ժառանգություն: Նա մայրենի լեզվով գրել է ավելի քան 200 հոդված, գիտական վերլուծություններ, գրքեր, բառարաններ եւ այլ աշխատություններ: Նա տիրապետել է գերմաներենին եւ թարգմանչական արվեստին:

Առանձնապես ուշագրավ է՝ 1903 թվականին "Լումա" հանդեսի 5-րդ համարում տպագրված նրա "Դորպատի համալսարանը եւ նրա հայ ուսանողները" աշխատությունը, որտեղ տեղեկություններ կան 1830 թվականից մինչեւ 1892 թվականները այդ համալսարանում սովորած հայ ուսանողների մասին: Կարեւոր տեղեկություններ են գրի առնված նաեւ մեծանուն գրող Խաչատուր Աբովյանի ողբերգական սպանության փաստի վերաբերյալ, որին համառոտակի կանդրադառնանք այս բաժնում:

Լ.Տիգրանյանը գրում է. «Աբովյանի անհետացման փաստի մասին կան տարբեր կարծիքներ: Այդ հարցով, 1903 թվականի մայիսի 26-ին ես դիմեցի Աբովյանի աշակերտներից պ. Վարդան Խուդաբաշյանին, որը այդ օրերին արդեն 75 տարեկան էր: Նա պատմեց, որ ինքը սովորել է Երեւանի գավառական ուսումնարանում, որի տեսուչն է եղել Խաչատուր Աբովյանը:. Նա 18 տարեկան է եղել, երբ ավարտել է այդ ուսումնարանը: 1848 թվականի հունիսի սկզբներին, Վարդան Խուդաբաշյանը, երեք այլ հայ տղաների հետ, որոնք նունպես եղել են Աբովյանի աշակերտներից, Նասիր-Բեգի հրավերով, գնացել են, նրա եղբոր՝ Ասադբեգի այգին գոգջա (սալորի մի տեսակ է) ուտելու: Այգու դռնից ներս մտնելուց հետո, Նասիր բեգը՝ ծախ կողմի վրա, տղաներին ցույց է տվել մի ընկուզենի եւ հայերեն լեզվով ասել՝ «մեր տղա, Ձեր Աբովյանը այս ընկուզենու տակ է թաղված հա՞»»:

Խուդաբաշյանից լսելով այդ տեղեկությունները՝ Տիգրանյանը որոշում է անպայման տեսնել այն տեղն, ուր պետք է թաղված լինի Աբովյանի աճյունը: Եվ ահա 1903 թվականի մայիսի 30-ին Լեւոն Տիգրանյանը, Վ. Խուդաբաշյանը ու Աբովյանին սպանող Շաֆիբեգովի տղա՝ Մամադբեգ Շաֆիբեգովը գնում են հիշյալ այգին՝ Աբովյանի գերեզմանը տեսնելու:

«Այգիները գտնվում էին «Դամբուլաղ» կոչվող տեղում, որի սահմանները ձգվում են Գետառի ձախ ափով՝ հին Նորքից մինչեւ Շիլաչի ընկած հողամասերում: Հասնելով Շաֆիբեգովի այգու դռանը, ներս մտանք, որտեղ ձախ կողմի վրա Վարդան Խուդաբաշյանը ցույց տվեց մի եռանկյուն փոս, ասելով, որ հենց այդ փոսի մեջ է կանգնած

եղել այն ընկուզենին (որը այլեւս չկար), որի տակ պետք է թաղված լիներ Աբովյանի դիակը: Մի հարեւան ծերունի թուրք նույնպես հաստատեց, որ այդ փոսի կենտրոնում, անցյալներում իրոք եղել է մի մեծ ընկուզենի, որը այլեւս չկա»,- հիշատակում է Տիգրանյանը: Տեսնելով այդ բոլորը Լեւոն Տիգրանյանը հույս է հայտնում, որ երիտասարդ Մամադբեգ Շաֆիբեգովը թույլ կտա փորել այդ փոսը՝ Աբովյանի ոսկորները գտնելու համար:

Հետագայում, Աբովյանի սպանության փաստի վերաբերյալ, այդ նույն տեղեկությունները հաղորդում է նաեւ Գուրգեն Սամսոնի Սարդարյանը: Վերջինս 1932-թվին՝ բանակից վերադառնալուց հետո, ապրելու տեղ չունենալու պատճառով եւ այլ հանգամանքներից ելնելով, նախկին չեկայի պետ Ագուլյանի պահանջով ստիպված է լինում որոշ ժամանակ ապրել վերը հիշատակված Մամադբեգ Շաֆիրբեգի տանը: Այդ նույն տան ծառայող Ասադ Ամին (նախկին ծառայողի տղան), որը 90 տարին անց մարդ է լինում Սարդարյանին պատմում է, որ ինքն 8 տարեկանում ականատես է եղել Խ. Աբովյանի սպանությանն ու թաղմանը, որը կատարվել է Մամադբեգի հոր՝ Շաֆիբեգի կողմից: Ասադ Ամին Սարդարյանին ցույց է տալիս այն տեղը ուր մարդասպանները թաղել են Աբովյանի դիակը: Նա նույնիսկ առաջարկում է փորել եւ հանել Աբովյանի աճյունը:

Գուրգեն Սարդարյանն այդ բոլորի մասին նույնությամբ, պատմում է Չեկայի պետ Ագուլյանին: Վերջինս խոստանում է, որ այդ հարցով ինքն անձամբ կզբաղվի: Սակայն Ագուլյանին կանչում են Թիֆլիս, փոխում են հանգամանքները եւ այդ գործը ձգձգելով՝ այդպես էլ մնում է չբացահայտված:

Ասենք, որ 1987թ.-ին Խ. Աբովյանի ողբերգական սպանության մասին տեղեկություններ է ստանում Երեւանի Մանկավարժական ինստիտուտի պատմության դասախոս Վարշամ Ավետյանը, որը մեծ հետաքրքրություն է ցուցաբերում այդ գործի նկատմամբ: Բարեբախտաբար կենդանի է լինում նաեւ Գուրգեն Սարդարյանը, որին անձամբ հանդիպում է Վարշամ Ավետյանը եւ նրանց միջեւ հանգամանալից զրույց է տեղի է ունենում Աբովյանի սպանության հարցի շուրջ: Ավետյանի ուսումնասիրություններից երեւում է, որ բացի Լեւոն Տիգրանյանից, Աբովյանի սպանության հարցին անդրադարձել է նաեւ՝ Ներսես քահանա Տեր-Կարապետյանն՝ իր «Խաչատուր Աբովյան» ատենախոսության մեջ (1911 թ., Թիֆլիս): Վ. Ավետյանն այն համոզմանն է, որ այդ ատենախոսությունում բերված տեղեկությունները համընկնում են Գուրգեն Սարդարյանի տեղեկություններին:

Եւ ինչպես երեւում է "Գրական թերթ"-ի 1988 թվականի սեպտեմբերի 9-ին համարում տպագրված՝ Վարշամ Ավետյանի «Խաչատուր Աբովյանի անհետացման առեղծվածի շուրջ» հոդվածից,

բժիշկ Լեւոն Տիգրանյանի հաղորդած տեղեկությունները Խաչատուր Աբովյանի սպանության փաստի վերաբերյալ հետագայում հաստատվել են նաեւ վերը հիշատակված հեղինակների կողմից:

Բացի դրանից, պարզվում է, որ Խաչատուր Աբովյանի կինը էմիլիեն ստույգ իմացել է ամուսնու սպանության եւ թաղման վայրի մասին: Այդ մասին գիտեին նաեւ Աբովյանի աշակերտներից շատերը:

"Լումա"-յի՝ 1903թ.-ի այդ նույն 5-րդ համարում բժիշկ Լեւոն Տիգրանյանը գրում է նաեւ Աբովյանի մասին: Այնտեղ ասվում է, որ ինքը Լեւոն Տիգրանյանը եղել է Աբովյանի տղայի՝ Վարդանի հին ընկերը եւ նրա ժամանակակիցը (նուն թվականի ծնվածներ են): 1881 թվականին Լեւոն Տիգրանյանը Վարդանի մոտ տեսել է՝ նրա հոր յուղաներկով արված դիմանկարը: «Ես շատ ուրախացա, որ գտա մեր հռչակավոր Աբովյանի պատկերը»,- գրում է Լեւոն Տիգրանյանը: Վարդանը նրան հայտնում է, որ 15 տարի այդ նկարը կորած է եղել եւ գտնվել է մի պարոնի տանից: Նկարը կորուստից փրկելու և բազմացնելու նպատակով, Լեւոն Տիգրանյանը, համոզելով ընկերոջը, վերցնում է այն: Նա, 1881 թվականին, այդ դիմանկարը տանում է Թիֆլիս եւ Բարկանովի լուսանկարչատանը՝ բազմացնում (մեր կարծիքով այդ նկարները բաժին են հասնում հանրաճանաչ հայերին ու հայ բազմաթիվ ընտանիքների): «Այժմ Խաչատուր Աբովյանի լուսանկարը՝ կարելի է տեսնել ամեն մի հայի սեղանի վրա»,- գրում է Լեւոն Տիգրանյանը:

Լեւոն Տիգրանյանը գրում է, որ Խաչատուր Աբովյանն ունեցել է մի որդի՝ Վարդանը եւ դուստր՝ Զարմանադուխտը: Աղջիկն ամուսնացել է Երեւանում ապրող ռուս Գրիգորի Բաժովսկու հետ: Ունեցել են 4 երեխա՝ Իլիան, Օլգան, Զինադիան և Վլադիմիրը (բժիշկ): Վարդանն ամուսնացել է՝ Թիֆլիսեցի օր. Կատերինա Եարալյանի հետ եւ ունեցել են 5 երեխա՝ Կոստանդինը, Վիկտորիան (Մարիամ), Լեւոնը, Աշոտը, Շուշանիկը:

Ընթերցելով Լեւոն Տիգրանյանի թողած գրական ժառանգությունը (գիտական բնութի մի քանի տասնյակների հասնող հոդվածներ, գրքեր, արժեքավոր բառարաններ, թարգմանություններ եւ այլն)՝ մեկ անգամ եւս համոզվում ենք, որ դրանք տարիների քրտնաջան աշխատանքի եւ համառ ուսումնասիրությունների արդյունք են: Լեւոն Տիգրանյանն իր դարի ծնունդն է, հայ ազգի նվիրյալ զավակը, որը հայրենիքի ցավերն իր սրտի մեջ անթեղած՝ սպասում է բաղձալի ապագային, որը սակայն այդպես էլ չի տեսնում:

Մինչեւ վերջ նա ձգտում է իր ժողովրդի գիտակցական մակարդակը որոշակիորեն բարձրացնել, եւ նրան հասու դարձնել առողջապահորեն ճիշտ ապրելու հնարավոր միջոցները:

Եվ այսօր,՝ գիտության զարգացման այս բուռն ժամանակաշրջանում, երբ արդեն բացահայտված են անցյալի շատ գաղտնիքներ, մեկ անգամ եւս համոզվում ենք, որ ավելի քան 100 տարի առաջ, Լեւոն Տիգրանյանը ճիշտ է կողմնորոշվել մասնագիտական հարցերում եւ գործնական ռեալ միջոցներ է առաջադրել ժանտախտի, խոլերիայի, տիֆերի եւ մյուս վարակիչ հիվանդությունների համաճարակների կանխարգելման համար: Դրա համար էլ «նա մինչեւ վերջ այրվում է՝ ուրիշներին լուսավորելու համար»: Եվ այժմ, չնայած նրա գործունեության ժամանակաշրջանից անցել է ավելի քան մեկ դար, անվանի բժիշկի եւ մեծ հայրենասերի պատկերը վառ է մնում սերունդների հիշողության մեջ:

Մխիթար Հերացու, Ամիրդովլաթի, Գրիգորսի ժառանգորդների համաստեղության մեջ, Լեւոն Տիգրանյանն իրավացիորեն նվաճել է իր արժանի եւ մշտահաստատ տեղը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայկ. Սով. Հանրագիտական, հատ 11, էջ 701-702:
2. Գրիգոր Արծրունի «Երեւանի նահանգները», "Մշակ" հ. 102-111, 1890 թ.
3. Լ. Ա. Հովհաննիսյան - «Բժշկության պատմությունը Հայաստանում», Հատ. 4, 66-80 էջ, Երեւան 1947 թ.:
4. Ռ. Փարսադանյան - «Հայ բժշկության պատմությունից», էջ 48-69, Երևան 1958:
5. Հ. Նազարյան - «Հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովի պատմությունը», Թիֆլիս 1883 թ.:
6. Մահագում- «Բժիշկ Լ. Տիգրանյաց», "Լումա" հանդես, 1906 թ. հ.1:

; Դավթյան Գ. «Երեւանի պատմությունը» էջ 263, 1963թ.

Լ. ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ԳՐՔԵՐ ԵՎ ՀԱՆԴԵՍՆԵՐ

1. «Անատոմիայի բառարան» Լատիներենից եւ Ռուսերենից՝ հայերեն, Թիֆլիս 1879 թ.:
2. «Մարդակազմություն (անատոմիա)» Երևան 1881 թ.:
3. «Բժշկական բույսերի բառարան» Լատիներենից եւ Ռուսերենից՝ հայերեն, Երեւան 1883 թ.:
4. «Դորպատի Համալսարանը և նրա հայ ուսանողները (1830-1892թ.)», "Լումա" հանդես հ. 5, 1903 թ.:
5. «Մանկական պարտեզ», Ս. էջմածին, 1894 թ.:
6. Առանձին հոդվածներ /քանակով 200-ից ավելի/, որոնք տպագրված են «Առողջապահություն» հանդեսի 1881-1884 թվականին հրատարակված բոլոր համարներում:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՎԱԾ ԼԵՎՈՆ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

1. Գյոթե- «Հերման Դորթան», "Մուրճ" հանդեսի 1-4 համարներ, 1885թ.:
2. Գյոթե- «Ֆաուստ», "Մուրճ"-ի 6-12 համ., 1899 թ.:
3. Գյոթե- «Տորքատո տասսո», "Լումա" հանդես, հ. 1-2, 1901 թ.:
4. Գոգոլ- «Վերաքննիչը», Երեւան, 1905 թ.: